ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 սեպտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

119
(2969)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔԱՆՈՒՄ Է ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼ ՀՈՂԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ՆՎԻՐՈՂ ԳԵՆԵՐԱԼԻՆ

ՀՀ դեսպանը Ռուսաստանի Դաշնությունում փոխվեց: ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը գնաց Մոսկվա՝ որպես ՀՀ դեսպան, իսկ Վաղարշակ Հարությունյանը վերադարձել է Երեւան, ինչը շատ է տխրեցրել ՔՊ-ական մեկ այլ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանին:

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ Անդրանիկ Քոչարյանը սկսել է ընդհուպ Նիկոլ Փաշինյանի մոտ լոբբինգ իրականացնել, որ Վաղարշակ Հարությունյանն անգործ չմնա: Սա քննարկվել է նաեւ Քոչարյանի մտերիմ, իսկ երբեմն, տարբեր լուրերով, նրա կողմից զանազան նպատակներով շահագործվող պատգամավորների հետ, որպեսզի ՔՊ վարչության նիստերի ընթացքում եւս Վաղարշակ Հարությունյանի ապագայի հարցը քննարկվի:

Հիշեցնենք, որ Վաղարշակ Հարությունյանն այն պաշտոնյան է (նա ՀՀ պաշտպանության նախարարն էր), որը ՌԴ պաշտպանության նախարարի հետ առանձին փաստաթղթի ստորագրմամբ Սյունիքի մարզից հայ դիրքապահներին ստիպեց հետ քաշվել, եւ հողերը տրվեցին Ադրբեջանին: Թեեւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 1-ին կետում հստակ գրված էր, որ պատերազմի դադարից հետո «Կողմերը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում», բայց Վաղարշակ Հարությունյանը մեր բարենպաստ դիրքերը առանձին փաստաթղթով նվիրեց Ադրբեջանին: Եվ ահա, այս պաշտոնյայի համար Անդրանիկ Քոչարյանը լոբբինգ է անում, որ առանց պաշտոնի չթողնի նրան:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս առիթով զրուցել եւ Անդրանիկ Քոչարյանի եւ Վաղարշակ Հարությունյանի հետ, սակայն երկուսն էլ օրեր շարունակ համառորեն չեն պատասխանում մեր հեռախոսազանգերին:

ԿԳՄՍ փոխնախարար, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի նախագահ Կարեն Գիլոյանի վստահված ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանը պաշտոնի հերթական չարաշահումն է թույլ տվել: Չարաշահման արդյունքում պետությանը զգալի ֆինանսական վնաս է հասցվել, բայց պակաս կարեւոր չէ կոռուպցիոն գործարքը: Բանն այն է, որ պետական նմուշի դիպլոմների տպագրությունը, ըստ աշխատանքային պայմանագրի եւ պաշտոնի գործառույթի, պետք է իրականացնի էլեկտրոնային կառավարման բաժնի ղեկավարը, տվյալ դեպքում՝ Լիդա Մեծոյանը: Ռեկտորի ժ/պ Տիգրան Սիմոնյանը, սակայն, տպագրությունը հանձնարարել է մագիստրատուրայի բաժնի ղեկավար Գայանե Թամրազյանին եւ միջազգային բաժնի ղեկավար Արմինե Սարգսյանին: Չբավարարվելով անօրինական հրամանով՝ Տիգրան Սիմոնյանը կարգադրել է լրացուցիչ բյուջեի հաշվին վճարել վերը նշված աշխատակիցներին: Բուհի ֆինանսական գծով պրոռեկտոր Վերանյանը, համաձայն չլինելով ռեկտորի ժ/պ Սիմոնյանի հետ, հրաժարվել է հանձնարարական իջեցնել, որից հետո աշխատանքից ազատման դիմում է գրում: Վերանյանի ազատումից հետո Սիմոնյանն ինքն է հրաման իջեցնում կրկնակի վճարման համար, որը խոշոր չափերի է հասնում: Արդյո՞ք պաշտոնի չարաշահումից, պետական բյուջեի անօրինական վատնումից բացի չկան ռիսկեր՝ պետական դիպլոմի անօրինական տպագրության եւ կոռուպցիոն այլ բնույթի. գնդակն իրավապահ մարմինների դաշտում է՝ հերթական անգամ Գիլոյանը եւ իր անմիջական աջակցությունը ստացած Տիգրան Սիմոնյանը կմնան անպատի՞ժ, թե՞ ոչ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



ՀՀ իշխանությունները «թեժ աշնանն» ընդառաջ պատրաստվում են սեպտեմբերի 9-ից մեկնարկելիք ԱԺ աշնանային նստաշրջանին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ ՔՊ խմբակցությունը շաբաթ օրը կհավաքվի Սեւանի կառավարական ամառանոցում՝ Նիկոլ Փաշինյանի հրահանգմամբ որոշելու իր անելիքները, քանի որ ընդդիմադիր դաշտում էլ հայտարարել են, որ աշնանը վերսկսելու են իշխանությունների հրաժարականի պահանջով հավաքներն ու ակցիաները: Երեկ ԱԺ-ում տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նիստից արդեն ակնհայտ էր ՔՊ-ականների խիստ տրամադրվածությունը ընդդիմադիրների հանդեպ, ու այսօր էլ Սեւանում կշարունակեն քննարկումները, թե ինչ քայլեր են ձեռնարկելու ընդդիմադիրների դեմ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականները մտադիր են ոչ միայն ԱԺ-ում քաղաքական խոսույթով ճնշել, այլեւ բոլոր ձեւերով «ենթարկեցնել ու լռեցնել ընդդիմությանը»: ՔՊ-ում ներքին որոշում կա՝ անհանդուրժող լինել բոլոր ընդդիմադիր քաղաքական ուժերի նկատմամբ. այն ուժերը, որոնք «կհանդգնեն» ակտիվություն ցուցաբերել, դեմ դուրս գալ իշխանություններին եւ բողոքի ակցիաներ, ցույցեր կկազմակերպեն, անմիջապես կպատժվեն ու խիստ ճնշումների կենթարկվեն իշխանությունների կողմից: Իշխանականները տրամադրված են ընդհուպ համատարած քրեական հետապնդումներ եւ կալանավորումներ իրականացնել, այդ թվում՝ անգամ խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների հանդեպ գնալ նման գործողությունների: ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանն այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց. «Ես նման տեղեկություններ չունեմ, բայց այս իշխանություններից հեռու չէ: 2018 թվականից սկսած՝ ճնշումներ են եղել նախկին զինվորականների, պետական տարբեր ղեկավարների եւ բոլոր այն մարդկանց հանդեպ, ովքեր ընդդիմանում են իշանություններին»:

Բուլղարիայում մի քանի օր շարունակ պահված եւ ֆիզիկական բռնության ենթարկված ՀՀ քաղաքացիները դիմել են ՀՀ արտգործնախարարություն: «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի անգամ ահազանգել է, որ վերջին շրջանում Բուլղարիան խտրական եւ անբարեհաճ վերաբերմունք է ցուցաբերում Հայաստանի քաղաքացիների նկատմամբ: Հանգստի նպատակով Բուլղարիա մեկնած Հայաստանի քաղաքացիներին, որոնք մուտքի արտոնագիր են ունեցել, արգելել են մտնել այդ երկիր: Ավելին՝ մայրաքաղաք Սոֆիայի օդանավակայանում նրանց ձերբակալել են եւ տեղափոխել հատուկ պահման վայր, որտեղ սարսափելի սանիտարական պայմաններ են եղել, իսկ ոստիկանները խիստ վատ վերաբերմունք են ցուցաբերել նրանց նկատմամբ, անգամ ֆիզիկական բռնություն են գործադրել, թույլ չեն տվել սնունդ գնել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս իրավիճակից տուժած քաղաքացիները դիմել են ՀՀ ԱԳՆ՝ պարզաբանելով, որ Բուլղարիայի դեսպանատան խիստ անբարեհաճ գործելաոճի պատճառով իրենք թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես, թե՛ ֆինանսապես տուժել են: Քաղաքացիները հետաքրքրվել են, թե ինչպես պետք է հատուցում ստանան իրենց կորուստների դիմաց եւ ինչպես պետք է վերականգնվեն խախտված իրավունքները:

ԶՐՈՒՅՑ

ԲԱՔՎՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բաքվում պահվող, Արցախի նախկին բարձրաստիճան պաշտոնյաների գործի նախաքննությունն ավարտվել է: Ադրբեջանական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ այս մասին ասել է այդ երկրի գլխավոր դատախազ Քամրան Ալիեւը: Նա նշել է, որ նյութերը մոտ ժամանակներս կներկայացվեն դատարան:

ArmLur.am-ը այս հարցի վերաբերյալ զրուցել է միջազգային իրավունքի մասնագետ, իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ:

-Տիկին Սահակյան, այս հայտարարությունն իրենից ի՞նչ է ենթադրում:

-Նախ, նշեմ, որ տեղեկատվության կրկնություն է լինում: Ինչպես գիտենք՝ գլխավոր դատախազությունը պաշտոնապես էր տարածել դեռեւս մի քանի շաբաթ առաջ: Նախաքննությունն ավարտված է, նյութերը տրամադրվել են կողմերին ծանոթացման, որից հետո կմեկնարկի դատական քննության փուլը: Կարծում եմ՝ որպես այդպիսին այդ տեղեկատվությունն այլեւս լրարժան չէ, սակայն արհեստականորեն խնդրի վրա փորձում են ավելորդ ուշադրություն հրավիրել, բայց հասկանալի է, որ ինչ-որ կետում դատաքննությունները սկսվելու են: Մենք այստեղ գործ ունենք քաղաքական պատվերի վրա նախաձեռնված քրեական հետապնդման հետ, որի տրամաբանական ավարտը հենց մեղադրական եզրակացության գործի ուղարկումն է դատարան, եւ դատարանները, ըստ էության, ընդամենը վավերացնող գործառույթ են իրականացնելու: Որեւէ ակնկալիք չկա, որ նախաքննության թերացումները վեր են հանվելու կամ շինծու մեղադրանքները հերքվելու են, եւ այստեղ խիստ կանխատեսելի է, որ այդ հեռախոսային արդարադատության շրջանակներում վավերացվելու է դատախազության կողմից բերված մեղադրանքները:

-Հնարավո՞ր է, որ նորից շրջանառված այդ տեղեկատվությամբ փորձել են ավելորդ խուճապ տարածել:

-Կարծում եմ՝ ոչ թե խուճապի մասն է, այլ վերահաստատումն է իրենց հետեւողականության, որ, այսպես կոչված, նյուրնբերգյան տրիբունալները լինելու են: Առավելապես սա ներքաղաքական նշանակություն ունի՝ իրենց հասարակության մոտ հեղինակությունը քաղաքական ուժի բարձր պահելու նկատառումներից ելնելով: Նրանք վերահաստատում են, որ դիրքերի զիջում չկա, դատավարությունները լինելու են, եւ նշված անձինք ենթարկվելու են պատժի:

-Տիկին Սահակյան, ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Բաքվում պահվող հայ ռազմաքաղաքական գերիներն իրենց հարազատներին ասել են, որ տեսակապով չեն ցանկանում շփվել: Ի՞նչ եք կարծում, ի՞նչն է սրա պատճառը:

-Կարծում եմ՝ հասկանալի է, որ նրանք չեն կարող ազատ արտահայտություն ունենալ եւ գտնվում են կյանքի սպառնալից հանգամանքներում եւ նաեւ ենթարկվում են ճնշումների եւ ազդեցության: Նրանց ազատ կամքն էապես խեղված է, եւ այս հանգամանքներում նրանք հարկադրաբար հրաժարվում են իրենց իրավունքների իրականացումից: Այստեղ որեւէ կերպ չի կարող բնականոն պայմանների դեպքում մեկնաբանություն ունենալ: Այնտեղ գտնվող հայերը հայտնվել են արտաքին աշխարհից տեղեկացվածության պայմաններում եւ այդ տեսակապերը միակ հնարավորությունն են, որ իրացվում են: Որպես օտարերկրացիներ՝ նրանք այցելություններ չունեն իրենց քաղաքացիության երկրի հյուպատոսական ներկայացուցիչներից, որը կապված է դիվանագիտական հարաբերությունների բացակայության հետ, նրանք չեն կարողանում հանդիպել իրենց իսկ ցանկությամբ ոչ ադրբեջանցի փաստաբանների հետ: Միջազգային կառույցները, որոնք ունեն խոշտանգումների կանխարգելման մանդատ, չեն կարողանում մուտք գործել եւ տեսակցել: Միակ հնարավորությունը կարմիր խաչի տեսակցություններն են, այն էլ՝ սահմանափակ մանդատով, եւ այդ տեսակցությունների ընթացքում չօգտվել ընձեռնված հնարավորությունից՝ շատ անցանկալի զարգացում է այնտեղ գտնվող հայերի համար, եւ դա կարող է բացառապես ճնշումների եւ հարկադրանքի արդյունք լինել:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ռուսաստանը հանդես է գալիս ոչ թե որպես որեւէ կոնկրետ երթուղու ստեղծման, այլ Հարավային Կովկասում տնտեսական եւ տրանսպորտային հաղորդակցությունների ամբողջական ապաշրջափակման կողմնակից:

«Союзнику ОДКБ» հրատարակությանը տված հարցազրույցում այս մասին հայտարարել է Հայաստանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինը՝ պատասխանելով Սյունիքի մարզով Ադրբեջանից դեպի Նախիջեւան երթուղու ստեղծման մասին հարցին:

«2021 թվականին Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների որոշմամբ ստեղծված Եռակողմ աշխատանքային խումբը՝ երեք երկրների փոխվարչապետների համատեղ նախագահությամբ, զբաղվել է հենց այդ հարցով: Աշխատանքային խումբն իրականացրել է ռիթմիկ աշխատանք եւ հասել զգալի արդյունքների: 2023 թվականի հունիսին խմբի 12-րդ նիստում ընդհանուր փոխըմբռնում է ձեռք բերվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկաթուղային հաղորդակցության վերականգնման եւ կազմակերպման շուրջ»,- ասել է Կոպիրկինը:

Ըստ դեսպանի՝ խմբին հաջողվել է գրեթե հասնել համապարփակ, հավասարակշռված համաձայնության, բայց հետո գործընթացը ոչ ՌԴ-ի մեղքով կանգ է առել:

ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆՆԵՐՈՒՄ ԱՂԵՏ Է

Ամռան ճամփորդական սեզոնը, գրեթե մեկ շաբաթ է՝ ավարտվել է, սակայն անձնագրայինները հերթերից չեն «ազատագրվել»:

ՀՀ ներքին գործերի նախարարության Միգրացիոն եւ քաղաքացիության ծառայության անձնագրային բաժանմունքներում անձնագիր ստանալու, անձնագիր փոխելու, նույնականացման քարտ ստանալու հնարավորությունը դարձել է սեւ աղվես:

Անձնագրայիններում առավոտից հերթեր են կուտակվում, անձնագրային բաժնում բացվելուն պես՝ հերթ կանգնածներին հայտնում են. «կապ չկա, մոտեցեք օրվա 2-րդ կեսին»: Երաշխիք, որ օրվա երկրորդ կեսին կապ կլինի, չկա:

Նույնականացման (ID) քարտ հանելու համար պետք է ժամերով սպասել, մինչեւ մի քանի անգամ փորձելուց հետո աշխատակիցը կամ կասի կապը վերականգնվեց, կամ կխնդրի վաղը գալ. օրն ավարտվել է, եւ կապն այդպես էլ չի վերականգնվել:

«Ժողովուրդ» օրաթերթը օրեր շարունակ փնտրում եւ փորձում է կապ հաստատել ՆԳՆ ՄՔԾ հանրային կապերի պատասխանատու Նելլի Դավթյանի հետ, սակայն նա ոչ մի կերպ չի արձագանքում:

Այսպիսով, գալիս ենք այն եզրակացության, որ օրինակ ID նույնականացման քարտ ստանալու համար պետք է սպասել առնվազն 21 օր:

Հավելյալ վճարելու դեպքում էլ հնարավորություն չկա ավելի շուտ ստանալ:

«Համակարգը նոր է ներդրվում, լավ չի աշխատում: Հավելյալ վճարելու տարբերակ էլ չկա, պլաստիկի խնդիր կա: Օրինակ եթե մեզ մոտ լինի, կզանգենք կգաք 3 օրվա համար 10 հազար դրամ կվճարեք, կամ 5 օրվա համար 5 հազար կվճարեք, նույն օրը վերցնելու համար 20 հազար դրամ կվճարեք, կվերցնեք»,- նույնականացման քարտի համար դիմած քաղաքացուն ասել է Հրազդանի անձնագրային բաժնի աշխատակիցը:

Օրինակ, եթե քաղաքացու նույնականացման քարտը մեկ շաբաթից լինի անձնագրային բաժնում, այն կարող է վերցնել միայն 20 հազար դրամ վճարելու դեպքում:

Պետական բյուջեն լցնելուն հարկատուների վճարած գումարները չեն բավականացնում, այդ պատճառով 1000 ու մեկ վճար էլ պոկում են պետական ծառայության համար:

«ԳՆՈՒՄ ԵՆՔ ՓԱԿՈՒՂԻ». ՄԱՐՈՒՔՅԱՆ

Հայաստանի հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան Էդմոն Մարուքյանը ֆեյսբուքյան էջում անդրադարձել է Հայաստանին սպառնացող նոր զարգացումներին:

«Հույս ունեմ, որ բոլոր մտածող մարդիկ, քաղաքական ուժերը, քաղաքականացված անհատները կարձագանքեն եւ հստակ դիրքորոշում կարտահայտեն, որպեսզի կարողանանք կանխել սպասվող արհավիրքը: Աստված պահապան Հայաստանի Հանրապետությանը»,- տեսանյութին կից գրել է Մարուքյանը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՔՍՏԸ՝ ԳՐԵԹԵ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ

Ադրբեջանն ու Հայաստանն արդեն համաձայնեցրել են խաղաղության պայմանագրի տեքստի գրեթե 80%-ը: Իտալիայում ընթացող միջազգային համաժողովի ժամանակ այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Մենք կարող ենք խաղաղության հասնել Հարավային Կովկասում, եւ այսօր Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության բանակցություններում մենք տեսնում ենք, որ դա հնարավոր է: Խաղաղության պայմանագրի տեքստի շուրջ 80%-ն արդեն համաձայնեցված է: Մենք արդեն հասել ենք սահմանազատման եւ սահմանագծման գործընթացին: Սահմանազատվել է 13 կմ սահման, բայց Հայաստանի հետ մեր սահմանը 1000 կմ է: Այո, դա փոքր քայլ է, բայց քայլ է՝ ճիշտ ուղղությամբ»,-ասել է Ալիեւը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՄ–Ն ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿՄԿՍԵՆ

Եվրահանձնաժողովի փոխնախագահ Մարգարիտիս Սխինասը երկուշաբթի կայցելի Երեւան՝ ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ վիզաների ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու համար: Այս մասին ասվում է Եվրահանձնաժողովի հրապարակված հայտարարության մեջ:

Միեւնույն ժամանակ, նշվում է, որ դրա համար Հայաստանը պետք է բարեփոխումներ իրականացնի այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են սահմանների անվտանգությունը, միգրացիան, ճանապարհորդության հետ կապված հիմնարար իրավունքների եւ ազատությունների հարգումը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՌԱԴԱՆ ՆՇԱՆԱԿԵԼ Է ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ

Գերագույն Ռադան երեկ՝ սեպտեմբերի 5-ին, Ուկրաինայի արտաքին գործերի նախարար է նշանակել: Խոսքն Անդրեյ Սիբիգայի մասին է:

Այս մասին հայտնում է RBC-Ukraine-ը՝ պատգամավոր Յարոսլավ Ժելեզնյակին հղումով:

Համապատասխան որոշմանը կողմ է քվեարկել 258 խորհրդարանական:

Ավելի վաղ հայտնել էինք, որ նախկին արտգործնախարար Դմիտրի Կուլեբան սեպտեմբերի 4-ին հրաժարականի դիմում է գրել:

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսաստանում սեպտեմբերի 6-8-ն անցկացվում է քվեարկություն ՌԴ Պետդումայի պատգամավորների լրացուցիչ ընտրություններում, տարածաշրջանային եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

«Ինտերֆաքս» գործակալությունը հաղորդում է, որ ընդհանուր առմամբ, նախատեսվում են տարբեր մակարդակների ընտրություններ, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության 21 շրջանների նահանգապետերի ուղղակի ընտրություններ, Մոսկվայի քաղաքային դումայի պատգամավորների ընտրություններ, ինչպես նաեւ Պետդումայի պատգամավորների լրացուցիչ ընտրություններ երեք ազատ միամանդատ շրջաններում:

ԴՈՒՐՈՎՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ

Telegram-ի հիմնադիր Պավել Դուրովն առաջին անգամ մեկնաբանել է իր ձերբակալությունը եւ հայտարարել, որ Telegram-ը պատրաստ է լքել Ֆրանսիան:

Նա ֆրանսիական իշխանությունների պնդումներն անվանել է «ապշեցուցիչ» եւ ասել, որ Telegram-ը համապատասխանում է օրենքներին, եւ մեսենջերն ունի ներկայացուցիչ ԵՄ-ում, ով պատասխանում է հարցումներին: Փարիզը նաեւ Դուրովի հետ անձամբ կապ հաստատելու բազմաթիվ ուղիներ ունի, եւ նա մեկ անգամ չէ, որ այցելել է Արաբական Միացյալ Էմիրություններում Ֆրանսիայի հյուպատոսություն:

«Որոշ ժամանակ առաջ, երբ նրանք ինձ խնդրեցին, ես անձամբ օգնեցի նրանց Telegram-ով թեժ գիծ ստեղծել՝ Ֆրանսիայում ահաբեկչության սպառնալիքի դեմ պայքարելու համար»,- գրել է Դուրովը:

ԴԻՄՈՒՄ՝ ՈՂՋ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՈՐԱԿԵԼ

Միջազգային իրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոն, որը զեկույց էր գրել՝ օկուպացված Արցախում հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի գործողությունները որակելով որպես «ցեղասպանություն», երկրորդ բաց նամակն է հղել աշխարհասփյուռ հայությանը:



Նա նշել է երեք խնդիր, որոնք փոխկապակցված են:

«Հայաստանն Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի շուրջ բանակցելու ընթացքում շարունակում է մնալ վտանգի տակ: Հստակություն չկա նրա վերաբերյալ, թե ինչպես կարող է Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը՝ 2023 թվականի ցեղասպանության զոհերը, ապահով վերադառնալ իրենց նախնիների հողը: 23 հայ պատանդներ շարունակում են պահվել Բաքվի բանտերում:

Ադրբեջանը 2024 թվականի նոյեմբերին Բաքվում «COP հանուն խաղաղության» անվան տակ հյուրընկալելու է COP29-ը՝ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության հարցերով գագաթնաժողովը: Եթե հայերն ազատ չարձակվեն, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն անտեսվի COP29-ին մասնակցող պատվիրակների կողմից, ապա նախագահ Ալիեւին կտրվի հզոր հարթակ՝ էլ ավելի մեծացնելու ամբողջ Հայաստանը զավթելու իր աշխարհաքաղաքական հավակնությունները:Նման սցենարը ոչ միայն կժխտի Լեռնային Ղարաբաղի ցեղասպանությունը եւ պատանդներին կդատապարտի երկարամյա բանտարկության, այլեւ ամբողջ համայնքն անցյալի մոռացված մասունք կդարձնի, եւ դա կմեծացնի վտանգը հենց Հայաստանի համար», - գրել է Օկամպոն:

Նա նշել է, որ Հայաստանի իշխանությունները շատ բարդ բանակցություններ են վարում:

«Հայությունը՝Հայաստանում եւ Սփյուռքում, եւ ինձ նման մարդիկ, որոնք մտահոգված են ցեղասպանություններով եւ պատերազմներով, պետք է հարգեն այդ ջանքերը՝ բարձրացնելով խնդրի մասին իրազեկվածությունը եւ համախմբելով ողջ հայությանը՝ պաշտպանելու ժողովրդին ու հողը:

Եվ դա տեղի է ունենում, ամբողջ աշխարհից հայերն արշավ են անում: Օգոստոսի 23-ին ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը դիմել է ԱՄՆ պետքարտուղարին՝ ապահովելու Ադրբեջանից բոլոր հայ կալանավորների ազատ արձակումը: Նա գիտակցում է ԱՄՆ-ի ջանքերը, բայց անհանգստացած է, որ Բլինկենի խոսքերը «անուշադրության են մատնվել եւ շարունակելու են անտեսվել»:

Անցած ամսվա ընթացքում ավելի քան 30 երկրներից հազարավոր մարդիկ, որոնցից շատերը հայ նախնիներ ունեն, հավաքվել են թվային ֆորումներում եւ սոցիալական ցանցերում: Նրանց միավորել են նույն հեշթեգները՝ #COP29, #StopGreenwashGenocide, #FreeArmenianHostages, #FreePoliticalPrisoners: Այժմ ժամանակն է ընդլայնելու շարժումը եւ կապելու այն ամբողջ աշխարհում որոշում կայացնողների հետ: Ալիեւի զոհերը միայն հայերը չեն: Նա ազդում է շրջակա միջավայրի, ադրբեջանցի քաղաքացիների եւ նույնիսկ եվրոպացի պատգամավորների վրա: Ադրբեջանը, որը հարստացել է հանածո վառելիքով, առաջատար դիրք է գրավում կլիմայի փոփոխությունը շեղող գլոբալ ջանքերում: Վարչախումբը ոչ ոքի չի խղճում, նա ճնշում է լրագրողներին, ակադեմիկոսներին, իր սահմաններում ցանկացած այլախոհի», - շարունակել է Օկամպոն: Իրավապաշտպանի համոզմամբ՝ հաջորդ քայլը կլինի COP29-ի պատվիրակներից պահանջել բարձրաձայնել այս հարցերի շուրջ:

Նա հավելել է, որ ուրախ է սեպտեմբերի 9-ին Հայաստան այցելելու հրավեր ստանալու կապակցությամբ:

«Սա բացառիկ հնարավորություն կլինի հանդիպելու Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ եւ մշակելու ընդհանուր ռազմավարություն: Հայե՛ր, եկեք պաշտպանենք Հայաստանը եւ առաջնորդենք աշխարհը դեպի իսկապես խաղաղ COP29», - եզրափակել է Օկամպոն:

Ք.Մ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ «ՆԵՐՈՒՄ» ԻՐԵՆ ՉԵՆԹԱՐԿՎՈՂԻՆ

Աշնային քաղաքական թեժությունն աստիճանաբար սկսվում է այս անգամ ձերբակալություններով:

Սեպտեմբերի 2-ին ձերբակալվել են Հայաստանի ամենախոշոր կարի ֆաբրիկայի՝ «Գլորիա»-ի սեփականատեր Բագրատ Դարբինյանն ու Վանաձորի գլխավոր ճարտարապետ Սուրեն Աբովյանը՝ առավոտից նրանց աշխատասենյակներում մի քանի ժամ կատարված խուզարկությունից հետո:

Համաձայն տարածվող տեղեկությունների՝ ձերբակալված պաշտոնյաները կասկածվում են ապօրինի շինարարական թույլտվությունների տրամադրման մեջ:

Ասել է թե՝ օրենքի առաջ բոլորն են հավասար, սակայն հիշեցնենք որ ներկայիս իշխանությունն անգամ իր թիմակիցներին չի խնայում, օրենքի առաջ է կանգնեցնում:

Իսկ «Գլորիա» կարի ֆաբրիկան Վանաձորում գործադուլ էր հայտարարել 2018 թվականի հեղափոխության ընթացքում ի աջակցություն Նիկոլ Փաշինյանի: «Գլորիա» կարի ֆաբրիկայի զույգ մասնաճյուղերի աշխատողները՝ ընդհանուր թվով շուրջ 3 հազար կանայք, միացել էին հեղափոխական երթին:

Այսինքն՝ իշխանությունը հետապնդում է նրանց, ովքեր չեն ուզում ենթարկվել իրենց:

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՆՑ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ

ՔՊ-ն որոշել է խորհրդարանը վերածել սեփական կուսակցության եւ միանձնյա գործունեություն իրականացնել այնտեղ:

Այսպիսով, ArmLur.am-ն ԱԺ-ից տեղեկանում է, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորությամբ սեպտեմբերի 17-19-ը Հայաստանից խորհրդարանական պատվիրակություն կմեկնի Բուդապեշտ:

ԱԺ նախագահի գլխավորած այս պատվիրակությունը, ինչպես Կանադա գործուղվող պատվիրակության դեպքում, բացառապես իշխանության ներկայացուցիչներից է կազմված, ընդդիմադիր որեւէ պատգամավոր չկա պատվիրակության կազմում: Այսպիսով, Բուդապեշտ մեկնող պատվիրակության կազմում են՝ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավորներ Հռիփսիմե Գրիգորյանը, Մարիա Կարապետյանը, Ազգային ժողովի նախագահի մամուլի քարտուղար Մովսես Հարությունյանը եւ ԱԺ աշխատակիցներ:

Այսինքն, իրենց ժողովրդավար հռչակած ՔՊ-ականները, խորհրդարան ասելով, միայն իրենց են պատկերացնում:

Այս առնչությամբ Ազգային ժողովի նախագահի մամուլի խոսնակ Մովսես Հարությունյանն ArmLur.am-ին ասաց, որ Հայաստան-Հունգարիա բարեկամական խմբում որեւէ ընդդիմադիր պատգամավոր չկա:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

2005 Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

ՀՀ ֆինչական կոմիտեի զինվորական ֆինչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի ֆինության վարչությունում իրականացված բազմակողմանի ֆինությամբ բացահայտվել է դեռեւս 2005թ. ապրիլին կատարված՝ ժամկետային զինծառայող Նաիրի Իսախանյանի սպանության դեպքը, հայտնում են ՔԿ-ից:

«2005 թ. ապրիլի 11-ին՝ ժամը 02:40-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահակակետի տարածքում գտնվող ճաշարանի աստիճաններին հարող տարածքում ճակատի միջհոնքային շրջանում հրազենային երկու վնասվածքներով հայտնաբերվել էր պահակային ծառայություն իրականացնող, նույն զորամասի ժամկետային զինծառայող Նաիրի Իսախանյանը, ով զորամասի հրամանատարության կողմից անմիջապես տեղափոխվել էր Գորիսի քաղաքային հիվանդանոց, որտեղ պարզվել էր, որ վերջինս մահացել է:

Դեպքի առթիվ նույն օրը նախաձեռնվել էր քրեական վարույթ, որի շրջանակներում թեեւ սպանության կատարման համար 2005 թ. մայիսին քրեական հետապնդում էր հարուցվել տուժողի համածառայակից՝ նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Վ.Ա.-ի նկատմամբ, սակայն նույն թվականի սեպտեմբերի 5-ին մեղքը հիմնավորող բավարար փաստեր ձեռք չբերվելու հիմքով՝ վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել էր եւ վարույթը կասեցվել:

2023թ. մայիսի 29-ին կայացված համապատասխան որոշմամբ քրեական վարույթով նախաքննությունը վերսկսվել է:

Նոր երեւան եկած հանգամանքների հիմքով 2023 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել՝ Վ.Ա.-ին առաջադրված մեղադրանքի ծավալի մասը վերացնելու մասին 2005 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը վերացնելու մասին: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում իրականացված քննչական (այդ թվում՝ գաղտնի) եւ վարութային այլ մեծածավալ գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2005թ. մարտի 29-ին ՀՀ ՊՆ N զորամասում հրաձգային գումարտակի պարտադիր ժամկետային զինծառայողների մասնակցությամբ տեղի է ունեցել վիճաբանություն, որից հետո ժամկետային զինծառայող Վ.Ա.-ն, տեղեկացված լինելով նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Նաիրի Իսախանյանի եւ ՀՀ ՊՆ ՌՈ Գորիսի բաժանմունքի աշխատակցի ազգակցական կապի մասին, անհիմն ենթադրել է, որ Ն.Ի.-ն իր ազգականի միջոցով տվյալներ է տրամադրում իրավապահ մարմիններին եւ մեղադրել է վերջինիս ՌՈ-ին ինֆորմացիա հայտնելու մեջ: 2005թ. ապրիլի 10-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Վ.Ա.-ն ականատես է եղել շարահրապարակի մոտակայքում Նաիրի Իսախանյանի եւ ՌՈ վերոնշյալ աշխատակցի խոսակցությանը: Նույն օրը՝ ժամը 20:00-ից 22:00-ն ընկած ժամանակահատվածում, Վ.Ա.-ն, համածառայողների շրջանում կեղծ հեղինակությունն ու դրանով պայմանավորված թվացյալ ազդեցությունն ընդգծելու շարժառիթով, գնացել է զորամասի մշտական տեղակայման վայրում գտնվող պահակակետ, որտեղ ժամապահի պարտականություններն իրականացնող Նաիրի Իսախանյանին անվանել է «մատնիչ»: Վերջինս հակադարձել է նրան, հիմնավորում պահանջել՝ նշելով, որ վերակարգի ծառայությունն ավարտելուց հետո այցելելու է նրան եւ խոսելու է այդ հարցի շուրջ:

Ժամեր անց՝ ապրիլի 11-ին՝ ժամը 02:20-ից 03:00-ն ընկած ժամանակահատվածում, Վ. Ա.-ն, դարձյալ գնացել է պահակակետ, որտեղ նոր կառուցվող ճաշարանին հարակից տարածքում, իր անձի «առավելություններն» ընդգծելու մոլուցքից, «ինքնահաստատման» պահանջից դրդված, խուլիգանական դրդումներով, համածառայակից Նաիրի Իսախանյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, «ԱԿ-74» տեսակի ինքնաձիգով երկու կրակոցից բաղկացած կարճ կրակահերթ է արձակել վերջինիս ուղղությամբ՝ ապօրինաբար կյանքից զրկելով նրան: Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Վ.Ա.-ին վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, որը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետին: Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ վարույթի նյութերը դատարան ուղարկելու հարցը քննարկելու նպատակով»,- նշվում է հաղորդագրության մեջ:

Ք.Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ

«Կանեփ-կակաչ-2024» համալիր օդերևութաբանական-կանխարգելիչ միջոցառումն ավարտվել է օգոստոսի 31-ին: Ամենամյա այդ միջոցառումն անցկացվում է բույսերի աճման եւ զարգացման շրջանում:

ՆԳՆ հաղորդմամբ, շուրջ մեկ ամիս տեւած միջոցառումը համակարգել է Քրեական ոստիկանության գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունը:

Միջոցառման նպատակը Հայաստանում շրջանառությունն արգելված թմրամիջոցներ պարունակող նյութերի, ինչպես նաեւ վայրի աճած բույսերի հայտնաբերումն ու այրման միջոցով ոչնչացումն է, թմրամիջոցների անօրինական շրջանառության դեպքերի կանխումը, հայտնաբերումը եւ բացահայտումը: Միջոցառմանը մասնակցել են ոստիկանության գրեթե բոլոր ստորաբաժանումները:

Հայտնաբերվել եւ այրման միջոցով ոչնչացվել է շուրջ 38 տոննա կանեփի եւ 21 կիլոգրամ կակաչի վայրի աճած զանգված: Բացի այդ, միջոցառման շրջանակում իրականացված զննությունների եւ խուզարկությունների արդյունքում 76 տնամերձ հողամասերից հայտնաբերվել է կանեփի մոտ երեք հազար բույս:

Արձանագրվել է հանցագործության 215 դեպք, որոնցով ապօրինի շրջանառությունից առգրավվել են ավելի քան 21 կգ մարիխուանա, 49 կգ կանեփ, 62 գրամ ափիոն, մոտ 22 դեզոմորֆին, 4 կգ-ից ավելի մեթամֆետամին, 21,5 մլ մեթադոն, մոտ 13 գրամ հաշիշի յուղ, 65 գրամ սփայս եւ տարբեր տեսակի հոգեմետ 52 դեղահաբ:

Միջոցառման ընթացքում, թմրամիջոցների հայտնաբերմանը զուգահեռ, հայտնաբերվել կամ բացատրական աշխատանքի շնորհիվ ոստիկանություն է հանձնվել տարբեր տեսակի զենք եւ զինամթերք՝ 6 ինքնաձիգ, 11 նռնակ, նռնակի 12 պայթուցիչ, 29 պահունակ, 7 ատրճանակ, 13 հրացան, 3 պայթուցիչ, եւ տարբեր տրամաչափերի 4975 փամփուշտ:

Միջոցառման շրջանակներում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է ՀՀ եւ այլ երկրների քրեական օրենսգրքերի տարբեր հոդվածների հատկանիշներով հետախուզվող 103 անձ:

Թեեւ ավարտվել է «Կանեփ-կակաչ-2024» միջոցառումը, սակայն ոստիկանությունը չի պատրաստվում թուլացնել ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարի տեմպերը: Հանցագործությունների կանխման, նախականխման եւ բացահայտման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

ԼՈՒՐԵՐ

ԹԱՔՑՐԱԾ ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Վարդաշեն» տարածքային բաժանմունքի ծառայողները ստացել էին տեղեկություններ այն մասին, որ ըստ սահմանված կարգի՝ ազատազրկված անձանց ծառայություններ մատուցելու նպատակով «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ պետք է այցելի վարսավիր, եւ նրա միջոցով փորձ է արվելու բջջային հեռախոս անցկացնել հիմնարկ, հայտնում են Քրեակատարողական ծառայությունից:

«Իրացնելով ստացված տեղեկությունները՝ օպերատիվ աշխատակիցները խուզարկության են ենթարկել սեպտեմբերի 3-ին հիմնարկ այցելած վարսավիրին: Խուզարկության արդյունքում նրա աճուկային հատվածում թաքցրած բջջային հեռախոս են հայտնաբերել:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է վարչական վարույթ»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԱԱԾ՝ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՎ՝ ԿՆՈՋ ԵՆ ԱՌԵՎԱՆԳԵԼ

2024 թվականի սեպտեմբերի 4-ին՝ ժամը 14:58-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում ահազանգ, ապա նաեւ հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 12:00-ի սահմաններում, երկու անձինք Երեւան քաղաքի Աշտարակի խճուղի 7/2 հասցեից՝ մի կնոջ, առանց վերջինիս կամքը հաշվի առնելու, նստեցրել են «BMW» մակնիշի ավտոմեքենա եւ տարել անհայտ ուղղությամբ:

«Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննությունը հանձնարարվել է քննչական խմբին:

Նույն օրը կատարվել է դեպքի վայրի զննություն, որի արդյունքում վերցվել են տարածքը տեսանկարահանող սարքերի՝ դեպքին վերաբերելի տեսագրությունները եւ զննության ենթարկվել: Հարցաքննվել են դեպքին ականատես անձինք:

Ըստ նախնական տվյալների՝ տուժողն իր հարազատների հետ «Սան Մարկո» լողավազանում գտնվելու ընթացքում նրանց են մոտեցել սեւ հագուստով, ամբողջությամբ ծածկված եւ դիմակավորված երկու անձինք, ներկայացել որպես Ազգային անվտանգության ծառայության աշխատակից: Սկսել են խոսել կնոջ հետ, որի ընթացքում նրան արագ լողավազանի տարածքից տեղափոխել են ավտոկայանատեղի եւ այնտեղից ավտոմեքենայով հեռացել նշված վայրից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 96 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՊԱՌԱԿՏԵԼ Է

Կիրանց գյուղից հայտնեցին, որ վերջերս Կիրանց գյուղի հարեւան Աճարկուտ գյուղի «Սերգեյկուտ» տարածքում Կիրանցի բնակիչների քեֆի ժամանակ Կիրանցից մի տղամարդ,որի անունը չեմ ուզում հրապարակել,կենաց ասելիս շատ թունդ հայհոյել է բոլոր նրանց,ովքեր հերոսների արյունով պաշտպանած հողերն Ադրբեջանին հանձնելու համար դրամական փոխհատուցման դիմաց գրավոր հրաժարվել են սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերից: Կենաց ասողի եղբայրը զոհվել է Կիրանցի պաշտպանության ժամանակ: Քեֆի մասնակիցների մեջ եղել են հողերի դիմաց դրամական փոխհատուցում ստացածներ սակայն ոչ ոք չի հակադարձել կոշտ կենաց ասողին: Կիրանցից 11 ընտանիք, ովքեր ազատամարտում զոհված հարազատներ ունեն,չնայած իշխանության կողմից ճնշումներին, հրաժարվել են Ադրբեջանին հանձնված հողերի դիմաց փոխհատուցում ստանալ: Փոխհատուցում ստացածների մեջ էլ լարվածություն կա,քանզի հայտնի չէ, թե ինչպես է որոշվել յուրաքանչյուրին տրված գումարի չափը:Դա կատարվել է կառավարության գաղտնի որոշմամբ: Սահմանազատման անվան տակ ապօրինի կերպով Ադրբեջանին է հանձնվել Կիրանցի բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող 58 անշարժ գույք:

ԲԱՆՈՒԿ ՓՈՂՈՑԸ ՄԱՅԹԵՐ ՉՈՒՆԻ

Տուրիստական Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովա փողոցը շատ բանուկ է: Այն տանում է դեպի նախկինում գործող «Իմպալա» գործարանի մեծ թաղամաս: Փողոցը մայթեր չունի, ամեն պահ հետիոտները կարող են հայտնվել երթեւեկող ավտոմեքենաների տակ: Տարբեր բույսերով պատված, չմաքրված փողոցի եզրը քանդված վիճակում է, հետիոտները եւ ավտոմեքենաները կարող են ընկնել, այդ մեծ փոսի մեջ ընկնելու հետեւանքովվնասվել:

ԻԲՐԵՎ ԹԵ ԲՈՒԺՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Տավուշի մարզի բնակիչները լրագրողիս հայտնել են մի քանի դեպքերի մասին, որ Հայաստանից տարիներով բացակայած քաղաքացիները երբ Հայաստան են եկել,իմացել են,որ անցած տարիներին իրենք Հայաստանում հաշվառված են եղել ընտանեկան,տեղամասային բժշկի մոտ: Ընդ որում՝ նույն ընտանիքի անդամները հաշվառված են եղել տարբեր բնակավայրերի բժիշկների մոտ: Ընտանեկան բժշկի աշխատավարձի չափը կախված է նրա մոտ հավառված,նրա կողմից սպասարկվող քաղաքացիների թվից: Ռուսատանից ժամանած ՀՀ քաղաքացիները փորձել են զանգահարել իրենց բժշկական հաշվառման վայրի հեռախոսահամարով,սակայն պարզվել է,որ այդ հեռախոսահամարը գոյություն չունի: Այս խաբեությունը կարող էր կատարվել սահմանային անցակետերում ՀՀ քաղաքացիների ելքի մասին տեղեկատվությանը տիրապետողների մասնակցությամբ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՐԹԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ սեպտեմբերի 10-ից մեկնարկում են նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններ՝ ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացները:

Վերապատրաստումներն իրականացնելու են «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը, «Հայ խոհարարական ավանդույթների պահպանման եւ զարգացման» ՀԿ-ն, «Լավդավինդասթրիզ» մշակութային ՀԿ-ն:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը վերապատրաստման դասընթացներ է իրականացնելու «Ագրոտնտեսագիտական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում», «Ագրոնոմիա», «Սննդի տեխնոլոգիա», «Անասնաբուժություն», «Հրուշակագործություն, հացաթխում, մակարոնեղենի եւ հրուշակեղենի արտադրություն» ուղղություններով: Վերապատրաստման դասընթացներն իրականացվելու են նաեւ հիբրիդային եղանակով (դասընթացները կազմակերպվելու է ք. Երեւան, Տերյան 74 հասցեում, հեռ. (+374)43 66 07 71, էլ. հասցե՝ info@anau.am):

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամն իրականացնելու է դասընթացներ «Ծրագրավորման հիմունքներ եւ ավտոմատացված համակարգեր», «Վեբ», «Գրաֆիկա», «Ցանցեր-1 եւ Ցանցեր-2» ուղղություններով: Վերապատրաստման դասընթացներն իրականացվելու են նաեւ հիբրիդային եղանակով, դասախոսությունների տեսաձայնագրությունները հասանելի են լինելու առցանց ձեւաչափով (վերապատրաստումը կազմակերպվելու է հետեւյալ հասցեում՝ ք. Երեւան, Տերյան 105, ՀԱՊՀ, 10-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, հեռ. (+374)91 01 00 85, էլ. հասցե՝ a.zaprosyan@polytechnic.am):

«Հայ խոհարարական ավանդույթների պահպանման եւ զարգացման» ՀԿ-ն դասընթացներ կիրականացնի «Խոհարարություն» եւ «Հանրային սննդի սպասարկում ու արտադրություն» ուղղություններով: Վերապատրաստման դասընթացներն իրականացվելու են նաեւ հիբրիդային եղանակով (վերապատրաստումը կազմակերպվելու է ք. Երեւան, Բուռնազյան 143 հասցեով, հեռ. (374)98 74 14 79, էլ. հասցե՝ armeniancookery@gmail.com):

«Լավդավինդասթրիզ» մշակութային ՀԿ-ն դասընթացներ կանցկացնի «Ոսկերչություն» ուղղությամբ: Դասընթացները կկազմակերպվեն հետեւյալ հասցեով՝ Հարավ-արեւմտյան զանգված Ռաֆֆու 69/1 ՄՍԿՀ, հյուսիսային դպրոց-պարտեզ, «Ոսկեգործական լաբորատորիա»: Վերապատրաստման գործընթացն անհրաժեշտության դեպքում կիրականացվի նաեւ հեռավար՝ Zoom հարթակում, նախնական հանդիպումներից հետո (մասնակցության համար զանգահարել (374)55 79 77 57 հեռախոսահամարով, էլ. հասցե՝ lovedovedrive@gmail.com):

Ա.Ս.

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ 2024 թվականի պետական բյուջեում կատարվել է վերաբաշխում եւ դրամական խրախուսում է տրամադրվել մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոներին եւ մրցանակաբաշխություններին մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի 3 գործչի եւ 2 խմբի:

Փոփոխությունը կատարվել է՝ համաձայն ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 29-ի N305-L որոշմամբ հաստատված «Մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների եւ մրցանակաբաշխությունների մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին դրամական խրախուսում տրամադրելու ծրագրի»:

Դրամական խրախուսումը նախատեսվում է հատկացնել «Ամերիկացին» հայկական ֆիլմի ստեղծագործական թիմին՝ Օսկարի մրցանակաբաշխությանը մասնակցելու, «Հայաստանի երգի պետական թատրոն» ՊՈԱԿ-ին՝ Ավինյոնի փառատոնին մասնակցելու եւ «Ցուրտ օր դժոխքում» ներկայացումը փառատոնի շրջանակում ցուցադրելու, ինչպես նաեւ 3 երիտասարդ բալերոների՝բալետային արվեստի լավագույն մրցույթ-փառատոներին մասնակցելու եւ մրցանակին տեղեր զբաղեցնելու համար: Մասնավորապես՝ դրամական խրախուսում կտրամադրվի Ռազմիկ Մարուքյանին՝«Արաբեսկ» մրցույթում 1-ին տեղը զբաղեցնելու համար, Գոռ Սարգսյանին եւ Ռաֆֆի Գալստյանին՝ «Դանսինգ Իտալի» պարի միջազգային մրցույթ-փառատոնում 1-ին մրցանակ ստանալու համար:

Դրամական խրախուսման հաշվարկն իրականացվում է մրցանակը ստանալուն հաջորդող ամսվանից 12 ամիս ժամկետով. մշակույթի գործիչներին դրամական խրախուսում տրամադրվում է ամսական պարբերականությամբ (սկսած մրցանակը ստանալուն հաջորդող ամսվանից), իրավաբանական անձի դեպքում՝ միանվագ տվյալ իրավաբանական անձին, որի գործադիր մարմնի որոշմամբ իրականացվում է դրամական խրախուսման բաշխումը:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ կարժեւորվի մշակույթի գործիչների դերը հայ մշակույթի հանրահռչակման գործում, եւ նրանց համար կձեւավորվի բարենպաստ ստեղծագործական միջավայր՝ նպաստելով ազգային ավանդական մշակույթի պահպանմանը, արտերկրում հայ մշակույթի հանրահռչակմանն ու դիրքավորմանը, ժամանակակից եւ նորարարական արվեստի ու ստեղծարար ոլորտի զարգացմանը:

ՎԱՐԱԿՄԱՆ 108 ԴԵՊՔ

Հայաստանում մինչեւ օրս (խմբ.) գրանցվել է Արեւմտյան Նեղոսի տենդով 108 հիվանդացության դեպք: Այդ մասին Կառավարության ճեպազրույցի ժամանակ ասաց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ ընդգծելով, որ բոլոր մարզերում իրականացվում է հակահամաճարակային տեղեկատվական աշխատանք:

«Այս պահին նվազման տեմպը բավարար չէ, եւ կարծում ենք՝ առաջիկա մեկ ամսվա ընթացքում շարունակելու ենք ակտիվ պահել աշխատանքները, որպեսզի սեզոնին համընթաց նաեւ ապահովենք նվազումը»,- ասաց նա:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է օգոստոսի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության իրականացրած հարկային իրավախախտումների կանխման, խափանման եւ բացահայտման ուղղությամբ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները:

28 դեպքով արձանագրվել են առանց համապատասխան հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու՝ ընդհանուր 5.038.468 ՀՀ դրամի ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտումով ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքեր: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 20.101.160 ՀՀ դրամ: Ցանկ 1-ը կցվում է:

26 դեպքով կազմվել են ապօրինի գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ արձանագրություններ: Ապօրինի ձեռնարկատիրական եկամտի չափը կազմել է 7.172.000 ՀՀ դրամ: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 8.752.533 ՀՀ դրամ: Ցանկ 2-ը կցվում է:

17 դեպքով արձանագրվել են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու խախտումներ: Արձանագրված խախտումների գումարը կազմում է 57.950.000 ՀՀ դրամ: Ցանկ 3-ը կցվում է:

Yandex Armenia. ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԴՊՐՈՑ

Yandex Armenia-ն Վանաձորի եւ Գյումրիի 14-17 տարեկան պատանիներին հրավիրում է իր ծրագրավորման դպրոց՝ Python-ի անվճար ուսուցման: Սեպտեմբերի 6-ին ընկերությունը սկսել է նոր ուսումնական տարվա համար հայտերի հավաքագրումը:

Դասերի ընթացքում ավագ դպրոցի աշակերտները կծանոթանան Python-ով ծրագրավորման հիմունքներին, կուսումնասիրեն ծրագրավորման լեզվի հիմնական հասկացությունները, կառուցվածքները եւ գրադարանները: Դասընթացներն անցկացվելու են առկա տարբերակով Գյումրիում եւ Վանաձորում ՝ տեխնոլոգիական կենտրոնների բազայի վրա՝ շաբաթական երկու անգամ, մեկուկես ժամ տեւողությամբ: Ծրագրին մասնակցությունն ամբողջովին անվճար է, սակայն, նախ, պետք է ընդունվել ծրագրավորման դպրոց: Հայտերի ընտրությունն այս տարի կավարտվի սեպտեմբերի 15-ին:

Ընդունելությունը ծրագրավորման դպրոց բաղկացած է 2 փուլից՝ թեստավորում եւ հարցազրույց: Նախ՝ պետք է լրացնել մասնակցության հայտը հետեւյալ կայքում՝ https://codingschool.yandex.com.am: Ի պատասխան՝ կստանաք նամակ՝ թեստավորման հղումով: Եթե դիմորդը հաջողությամբ անցնի թեստը, նրան կհրավիրեն հարցազրույցի:

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԳՈՀ ԵՆ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵՄՊԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթը հերթական անգամ Defense Housing թաղամասում է՝ ականատես լինելու ամենախոշոր թաղամասի շինարարության աշխատանքներին:

Ընդամենը երկու ամիս առաջ էր մեր նկարահանող խումբ եղել Defense Housing թաղամասում եւ կարող ենք վստահ հաստատել, որ բազմաբնակարան բնակելի շենքերի շինարարության բարձր տեմպը պահպանվում է, զգալի փոփոխություններին ականատես են ապագա բնակիչները ու հաստատում են արագ քայլերով ապագա տան լույս երեւում է:

Այս ժամանակահատվածում կատարվել է կենտրոնական անտառ-պուրակի կայացման, շատրվանային կոմպլեքսների կառուցման, շենքերի միջբակային հատվածների ձեւավորման, ներթաղամասային ճանապարհային ցանցի ուրվագծման եւ թաղամասն արտաքին ճանապարհային ցանցին կապող հանգույցների կառուցման առումով:

Նորակառույց շենքերի շինարարությանը զուգահեռ ընթանում են միջբակային տարածքների գոտիավորումը եւ բարեկարգումը: Աշխատանքներն արդեն սկսված են, որպեսզի շենքերը շահագործման հանձնելիս միջբակային տարածքներում կառուցված լինեն այգիները, խաղահրապարակները, ինչպես նաեւ ընտանեկան հանգստի կազմակերպման ոճով սրճարանները:

Մեծ ծավալներով իրականացվում են նորակառույց շենքերի արտաքին ու միջսենյակային պատերի կառուցման աշխատանքները, որոնք ամբողջական են դարձնում կառուցվող շենքերի տեսքը:

Ձեւավորվում են ոչ միայն ներթաղամասային ճանապարհային ցանցը, այլեւ թաղամասն արտաքին ճանապարհային ցանցին կապող հանգույցները: Արդեն ամբողջությամբ կառուցված է Հին Սիլիկյան խճուղու կողմից ճանապարհային հանգույցը: Ներկայում ակտիվ ընթանում է Հյուսիս-հարավ ճանապարհի կողմից երկու հանգույցների շինարարությունը, որոնք պատրաստ կլինեն սեպտեմբերի վերջին: Կառուցվելու են եւս երկու ճանապարհային հանգույցներ հարավային սահմանագծով դեպի էջմիածին արագընթաց ճանապարհից, որը պետական քաղաքաշինական ծրագրերով նախատեսված է դառնալ արագընթաց ճանապարհ դեպի Զվարթնոց օդանավակայան:Թաղամասում բոլոր ինժեներական ենթակառուցվածքները նոր են ստեղծվում, եւ առանձնահատուկ է, որ դրանք նախատեսված են ոչ միայն առաջին փուլով կառուցվող 43 հա մակերես զբաղեցնող առաջին բնակելի թաղամասի համար, այլ 140 հա տարածքով ամբողջ թաղամասի համար:

Այդ առումով, Defense Housing թաղամասի ապագա բնակիչները ոչ թե պարզապես ձեռք են բերում նորակառույց բնակարաններ Երեւանում կառուցապատողից, այլ կարողանալու են իրենց առօրյան կազմակերպել լավագույն կենսապահովման միջոցներով հագեցած որակյալ միջավայրում, որտեղ լինելու են 12.000 քմ միջբակային տարածքներ, շենքերի միջբակային ու հարակից տարածքներում 25 հա կանաչապատ գոտիներ, 24 հա կենտրոնական անտառ-պուրակ, 5 շատրվանային կոմպլեքսներ եւ Հայաստանի ամենախոշոր գունաձայնային եւ լազերային շատրվանային կոմպլեքսը, 2500 մ երկարությամբ եւ 13.5 մ լայնությամբ հեծանվուղի, 6.5 մ լայնությամբ լուսավորված ճեմուղիներ, դպրոցներ, մանկապարտեզներ:

Թաղամասում կառուցվելու է 250 մեգավատի հզորության ենթակայան, որի դեպքում տեխնիկապես անհնար են լինելու էլեկտրաէներգիայի ընդհատումներ, որը ըստ բնակիչների անախադեպ է:

Թաղամասն իր դիրքով եւ հնարավորությամբ առանձին կոյուղատար խողովակով միանալու է Աէրացիայի գլխավոր կոյուղատար համակարգին: Իրապես ձեւավորվում է նոր թաղամաս Երեւանում:

Ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում որակյալ էկոհամակարգի ձեւավորմանը: Կենտրոնական անտառ-պուրակում տնկված շուրջ 4500 ծառերից եւ բուսատեսակներից բացի, Ընկերությունը կատարում է նաեւ խիտ ծառատունկ թաղամասի 5500 մետր շրջագծով՝ բացառությամբ ճանապարհային հանգույցների հատվածների:

Defense Housing թաղամասում գործելու է նաեւ Հայաստանի ամենախոշոր գունաձայնային եւ լազերային շատրվանային կոմպլեքսը, որի կառուցման նախագիծն արդեն հաստատված է: Ավարտված են հողային աշխատանքները, տրված են անհրաժեշտ ջրային եւ էներգետիկ ինժեներական լուծումները: Կառուցման աշխատանքները նախատեսված են ավարտել 2025 թվականին:

Շենքերի կառուցման արտադրական պլանը ներկայում կազմում է ամսական 35.000 քմ եւ ավել բետոնի շինարարական մակերեսի չափ, իսկ Ընկերության ներկայացուցչի հավաստմամբ՝ ունեցած տեմպից էլ ավելի է արագացվելու շինարարության ընթացքը:

ԲՏԱ ՈԼՈՐՏ

ՀԻՄՔԵՐ՝ ՄԻԿՐՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը սեպտեմբերի 5-ին այցելել է «Հայկական աերոսիեզերական գործակալություն», որի նպատակն է հայկական աերոսիեզերական ոլորտի զարգացումը:

Գործակալության հիմնադիր, աերոտիեզերական ոլորտի փորձագետ Մհեր Մեհրաբյանը նախարարին ներկայացրել է գործակալության հիմնադրման պատմությունը, գործունեությունը, նպատակներն ու գաղափարները: Հանդիպման ընթացքում նախարար Հայրապետյանը շրջայց է կատարել գործարանում, ծանոթացել ԲՏԱ նախարարության հետ համագործակցության արդյունքում ստեղծված աերոտիեզերական ոլորտի զարգացմանը նպաստող ինժեներակոնստրուկցիոն եւ գիտահետազոտական ազատ լաբորատորիային, որը ներառում է «Մաքուր սենյակ» լաբորատորիան, նանոլիտոգրաֆիկ համակարգը, ԱԹՍ-ների եւ այլ թռչող սարքերի համար նախատեսված աերոդինամիկ խողովակը, աերոտիեզերական սարքերի եւ կոմպոնենտների թեստավորման այլ լաբորատոր սաքերը:

Նախարարին ներկայացվել է նաեւ «Էնջինդ ԱՄ» ընկերության գործունեությունը, որի նպատակն է ստեղծել ամուր հիմքեր հայկական տիեզերական արդյունաբերության համար՝ այդ շրջանակում, ճանապարհային քարտեզում ծրագրվում է կառուցել թվով չորս առանցքային գործարան, որոնցից մեկը կիսահաղորդչային կոմպոնենտների եւ միկրոէլեկտրոնիկայի արտադրության լաբորատորիա-գործարանն է: Ընկերության ղեկավարը նախարարին է ներկայացրել լաբորատորիա-գործարանի հավակնոտ ծրագրերը: Երկուստեք հաստատել են Հայաստանում միկրոէլեկտրոնիկայի արտադրության կարեւորությունն ու անհրաժեշտությունը. նախարարն իր աջակցությունն է հայտնել ընկերությանն այդ գործում:

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ «Արեն Մեհրաբյան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող աերոտիեզերական ինժեներության ոչ ֆորմալ կրթական ծրագրին, որի միջոցով խնդիր է դրված լուծելու Հայաստանում աերոտիեզերական ոլորտում մասնագետներ պատրաստելու հիմնախնդիրը: Հիմնադրամի միջոցով երիտասարդների համար կազմակերպվում եւ իրականացվում են աերոտիեզերական ինժեներության անվճար դասընթացներ, որոնք ոչ միայն միտված են երիտասարդներին կապելու աերոտիեզերական ոլորտի հետ, այլ նաեւ՝ վերապրոֆիլավորելով այլ մասնագետների, խթանելու նրանց գործունեությունն այս ոլորտում: Հիմնադրամի շնորհիվ շուրջ 850 շրջանավարտ ստացել է տարբեր մասնագիտություններ՝ եռաչափ մոդելավորում, ծրագրավորում, աերոտիեզերական ինժեներություն, էլեկտրոնիկա եւ միկրոէլեկտրոնիկա:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՆՅՈՒ ՋԵՆԵՐԵՅՇՆ»

ԴԱՍԱԿԱՆԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿՅԻ ՄԻԱԽԱՌՆՈՒՄ

Ս.թ. սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան» համերգասրահում սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19:00-ին «Vivaldi DJ» խորագրով համերգին ընդառաջ մամուլի ասուլիսը:

Ասուլիսի հիմնական բանախոսները՝ «Նյու Ջեներեյշն Փրոջեքթ»-ի գործադիր տնօրեն՝ Շմավոն Գրիգորյանը, Նյու Ջեներեյշն նվագախմբի գեղարվեստական ղեկավար՝ Նարեկ Գասպարյանը, Beatbox հայկական ասոցիացիայի ղեկավար՝ Բագրատ Տերտերյանը /DJ BeatMan/, կոմպոզիտոր, գործիքավորող, երգահան, դաշնակահար Արման Պեշտմալջյանը եւ ջութակահար՝ Էրիկ Մանուկյանը խոսեցին նախագծի գաղափարի, բացառիկության եւ սպասվող անակնկալների մասին:

Նարեկ Գասպարյանի խոսքով նախագծի նպատակը դասական ու սիրված ստեղծագործության միախառնումն է գերժամանակակից տեխնոլոգիաների հետ: Այս նոր մոտեցումը կսիրվի ինչպես արդեն փորձառու մասնագետների, այնպես էլ դասական արվեստին ոչ այդքան մոտ հանդիսատեսի կողմից:

Շմավոն Գրիգորյանը խոսելով նախագծի մտահաղացման մասին, նշեց; - Նախագծի մտահաղացումը մեր թիմի մոտ առաջացել էր դեռ նախորդ տարվանից: Մենք միշտ փորձում ենք կյանքի կոչել տարբերվող եւ ինքնատիպ նախագծեր: Ու այս նախագիծը եւս տեսակով բացառիկ է, քանի որ թե՛ Հայաստանում եւ թե՛ ամբողջ աշխարհում սա լինելու է առաջին անգամ: Մեզ հաջողվել է համախմբել տաղանդավոր ստեղծագործողների եւ արդյունքը միանշնական գոհացնելու է մեր հանդիսատեսին: Եվ սա եւս մեկ առիթ է երիտասարդներին ավելի մոտեցնելու դասական արվեստին: Ու նաեւ կուզենամ նշել, որ առաջիկայում՝ արդեն իսկ տարվում են բանակցություններ աշխարհի մի շարք երկրներում ներկայացնելու Vivaldi DJ նախագիծը: Բագրատ Տերտերյանը նշեց, որ Vivaldi DJ նախագիծը աննախադեպ է, երաժշտական աշխարհի տարբեր բեւեռների համադրություն է եւ իր համար իսկապես մեծ պատասխանատվություն էր Անտոնիո Վիվալդիի նման մեծության երաժշտությունը մշակել ժամանակակից երաժշտական տենդենցներին համապատասխան՝ իհարկե պահպանելով մեղեդին սկզբնական "տեսքով": Ըստ նրա ամբողջ թիմին հաջողվել է կատարել պատշաճ աշխատանք՝ եւ՛ դասական արվեստի տեսակետից եւ՛ նորարարական լուծումների կիրառման:

Արման Պեշտմալջյանն ու Էրիկ Մանուկյանն էլ փաստեցին, որ նման նախագիծ աշխարհում չի եղել, քանի որ օգտվել են Վիվալդիի «Տարվա եղանակների» օրիգինալ պարտիտուրայից եւ տոնայնության հետ կապված առհասարակ ոչ մի փոփոխություն չի կատարվել: Հանդիսատեսը լսելու է Վիվալդիի «Տարվա եղանակները» օրիգինալ՝ լարային կազմով, որին ուղակի ավելացրել են նոր գույներ ու տվել են նոր լուծումներ: Մշակումները լրիվ նոր են եւ արվել են 0-ից:

Նախագիծն ունի շարունակական բնույթ, առաջիկայում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում նախատեսվում են VIVALDI DJ, Aram Khachaturian DJ, Arno Babajayan DJ, Mozart DJ եւ այլ նախագծեր:

Հանդիսատեսին սպասվում է բացառիկ համերգ լի վառ ու հիշվող զգացողություններով:

Հ.Բ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՍԵՐԳԵՅ ՍՄԲԱՏՅԱՆԸ ԿԲԱՑԻ ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆԸ

Վալետա, Մալթա - Մալթայի ֆիլհարմոնիկ նվագախմբի 2024-25թթ. Համերգաշրջանի բացման համերգը կղեկավարի Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր, Մալթայի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը:

Սեպտեմբերի 6-ի համերգին կհնչի Յան Սիբելիուսի Ջութակի կոնցերտը՝ վիրտուոզ ջութակահար Սերգեյ Խաչատրյանի մեկնաբանությամբ, ինչպես նաեւ Յոհաննես Բրամսի՝ «Հովվերգական» անվանումով հայտնի 2-րդ սիմֆոնիան:

Վալետայի նախագահական պատմական պալատի Նեպտունի այգում կայանալիք համերգով կնշանավորվի Մալթայի ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ Սերգեյ Սմբատյանի համատեղ համերգային գործունեության նոր փուլը:

Սերգեյ Սմբատյան

Սերգեյ Սմբատյանը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարը եւ գլխավոր դիրիժորն է եւ Մալթայի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորը: Որպես դասական երաժշտության ժողովրդականացման ակտիվ ջատագով՝ դիրիժորը ծավալում է հագեցած միջազգային գործունեություն, ինչպես նաեւ մեծ կարեւորություն է տալիս դասական երաժշտության լսարանի երիտասարդացմանը եւ համաշխարհային ժամանակակից դասական երաժշտության հանրաճանաչմանը:

Դիրիժորը մի շարք ամենամյա երաժշտական փառատոների, ինչպես նաեւ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի գեղարվեստական ղեկավարն է: Նրա նախաձեռնությամբ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն իրականացնում է կրթամշակութային ծրագրեր՝ ուղղված երիտասարդ սերնդի մշակութային զարգացմանը: Սերգեյ Սմբատյանի կողմից հիմնադրված «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամը (M4FF) 2019 թվականից աջակցում է պատանի երաժիշտների մասնագիտական առաջընթացին:

Նախորդ համերգաշրջաններում որպես հրավիրյալ դիրիժոր ղեկավարել է Լոնդոնի սիմֆոնիկ նվագախումբը, «Ֆիլհարմոնիա» նվագախումբը, Վարշավայի ֆիլհարմոնիկ, Դրեզդենի ֆիլհարմոնիկ, Բրատիսլավայի Սլովակ ֆիլհարմոնիկ եւ այլ նվագախմբեր:

2022-2023թթ. համերգաշրջանում Սերգեյ Սմբատյանն ակտիվ համերգային շրջագայություններ է ունեցել Միացյալ Թագավորությունում Ռումինիայի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, 2023թ. ղեկավարել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի՝ Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված հյուրախաղերը Միացյալ Թագավորությունում, իսկ 2024 թվականին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում կայացած առաջին հյուրախաղերը:

2023 թվականից Սերգեյ Սմբատյանը ՅՈՒՆԻՍԵՖ-ի ազգային դեսպան է:

ԱՄԱՌԸ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Ամռան ամիսներին Շիրակի մարզային գրադարանն իրականացրել է 33 միջոցառում, որոնցում ընդգրկվել է 1849 նոր ընթերցող. հաճախումների քանակը կազմել է 39230: Ամռանը գրադարան է այցելել Շիրակի մարզի 21 դպրոցների ու նախակրթարանների 645 սան:

«Ամառը գրադարանում» ծրագրի մեկնարկը տրվել է հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը: Իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ ցուցադրություններ, գրքերի շնորհանդեսներ, գրողների հետ հանդիպումներ, գրքերի քննարկումներ, հեքիաթի ժամեր եւ ուսուցողական ճանաչողական այցեր:

Ընթերցողների խնդրանքով ամռանը գրադարանը հյուրընկալել է ժամանակակից գրող Աշոտ Աղաբաբյանին:

Ամռանը գրադարանում գործել են տարվա հոբելյարներին՝ Ակսել Բակունցին, Երվանդ Քոչարին, Երվանդ Մանարյանին, Ալեքսանդր Պուշկինին, Ալեքսանդր Դյումային (որդի), Էռնեստ Հեմինգուեյին, Յոհան Վոլֆգանգ Գյոթեին նվիրված գրքային ցուցահանդեսներ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅՏԱՑՈՒՑԱԿ

«Նոայի» մամուլի ծառայությունը հրապարակել է թիմի հայտացուցակը Կոնֆերենցիաների լիգայի հիմնական փուլի համար:

Հայաստանի գործող փոխչեմպիոնի տնային հանդիպումները կանցկացվեն Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում:

«ՓՅՈՒՆԻԿԻ» ԿԱՆԱՆՑ ԹԻՄԸ ԱՎԱՐՏԵՑ ՄՐՑԵԼՈՒՅԹԸ

Ֆուտբոլի Հայաստանի չեմպիոն «Փյունիկի» կանանց թիմը Չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում Լիմասոլում 0-3 հաշվով պարտվել է Կիպրոսը ներկայացնող «Ապոլոն Լեյդիսին»:

Արմեն Բարեղամյանի թիմը դուրս է մնացել պայքարից:

Հիշեցնենք, որ նախորդ մրցաշրջանում «Փյունիկի» կանանց թիմը պատմության մեջ առաջին անգամ դարձել էր Հայաստանի չեմպիոն ու նվաճել Չեմպիոնների լիգայի ուղեգիր:

«ՈՍԿԵ ԳՆԴԱԿԻ» ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԸ

Հեղինակավոր Goal.com պորտալը թարմացրել է «Ոսկե գնդակի» ֆավորիտների տասնյակը: Ցուցակը գլխավորում է «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորը:

Երկրորդ տեղում «Մանչեսթեր Սիթի» կիսապաշտպան Ռոդրին է, իսկ լավագույն եռյակը եզրափակում է «Ռեալի» անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմը:

«Ռեալի» նորեկ, ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեն նահանջել է 7-րդ տեղ:

«Ոսկե գնդակի» ֆավորիտները՝ ըստ Goal.com-ի

1. Վինիսիուս Ժունիոր («Ռեալ Մադրիդ», Բրազիլիա)
2. Ռոդրի («Մանչեսթեր Սիթի», Իսպանիա)
3. Ջուդ Բելինգեմ («Ռեալ Մադրիդ», Անգլիա)
4. Դանիել Կարվախալ («Ռեալ Մադրիդ», Իսպանիա)
5. Լաուտարո Մարտինես («Ինտեր», Արգենտինա)
6. Տոնի Կրոս («Ռեալ Մադրիդ», ավարտել է կարիերան, Գերմանիա)
7. Կիլիան Մբապե («Ռեալ Մադրիդ», Ֆրանսիա)
8. Հարի Քեյն («Բավարիա», Գերմանիա)
9. Ֆիլ Ֆոդեն («Մանչեսթեր Սիթի», Անգլիա)
10. Նիկո Ուիլյամս («Աթլետիկ Բիլբաո», Իսպանիա)

France Football պարբերականը սեպտեմբերի 4-ին հրապարակել էր անհատական գլխավոր մրցանակի բոլոր՝ 30 հավակնորդների անունները: 2003 թվականից ի վեր առաջին անգամ հավակնորդների ցանկում չեն ընդգրկվել Կրիշտիանու Ռոնալդուն եւ Լիոնել Մեսսին: Արգենտինացին «Ոսկե գնդակին» արժանացել է 8, իսկ պորտուգալացին՝ 5 անգամ:

● Սեպտեմբերի 14-ին Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում կբեմադրվի «Տապանի մոտ ժամը 8-ին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-5.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ծառայողական քննության կողմերն ինչպիսի իրավունքներ ունեն:

Մերի Սարգսյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ ծառայողական քննության կողմն իրավունք ունի ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված դեպքերում եւ ընթացակարգով՝

ա) ներկայացնել ծառայողական քննություն անցկացնելու դիմում,

բ) ծառայողական քննություն սկսելու պահից ստանալ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված իր իրավունքների եւ պարտականությունների մասին գրավոր ծանուցում,

գ) ստանալ ծառայողական քննության անցկացման կապակցությամբ խորհրդի որոշումների պատճենները, որոնք կարող են բողոքարկվել դատական կարգով,

դ) ծառայողական քննության ցանկացած փուլում միջնորդություններ ներկայացնել՝ առանձին գործողություններ կատարելու, ինչպես նաեւ ծառայողական քննության նյութերին իր դիմումը հիմնավորող, ծառայողական քննություն անցկացնելու կարգով նախատեսված փաստական տվյալներ կցելու եւ դրանց ընթացք տալու վերաբերյալ,

ե) ծառայողական քննության ցանկացած փուլում, գրավոր դիմում ներկայացնելով, հետ վերցնել ծառայողական քննություն անցկացնելու մասին իր դիմումը,

զ) տալ բացատրություններ,

է) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքներին կամ արձանագրություններին եւ դրանց կապակցությամբ դիտողություններ ներկայացնել, որոնք հաշվի չառնելը բողոքարկման ենթակա չէ,

ը) ծառայողական քննությունն ավարտվելուց հետո ծանոթանալ քննության նյութերին, քննությունը լրացնելու կապակցությամբ ներկայացնել միջնորդություններ:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ իրավունքներ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով:

Հայկ Գաբրիելյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց,

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

ՀՀ փաստաբանների պալատ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար եւ իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչեւ եռամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար:

Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վենետիկում կայացավ «Ես աշխարհից վրեժխնդիր կլինեմ սիրով. Փարաջանով» ֆիլմի պրեմիերան: Ֆիլմը, ի դեպ, շուտով հասանելի կլինի նաեւ հայաստանյան կինոթատրոններում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+11 + 16 +25 + 30
	Կոտայքի լեռներ	+10 + 16 +27 + 29
	Կոտայքի նախալեռներ	+20 + 23 +29 + 30
	Գեղարքունիք	+11 + 16 +25 + 28
	Լոռի	+14 + 18 +29 + 33
	Տավուշ	+18 + 22 +30 + 33
	Արագածոտնի լեռներ	+11 + 14 +17 + 20
	Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +27 + 31

	Արարատ	+23 + 25 +33 + 37
	Արմավիր	+20 + 22 +31 + 34
	Վայոց ձորի լեռներ	+11 + 14 +29 + 31
	Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23 +32 + 36
	Սյունիքի հովիտներ	+21 + 24 +33 + 35
	Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +30 + 32
	ԼՂՀ	+13 + 16 +29 + 31
	Երեւան	+25 + 27 +32 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.9.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*